

Վարդապատէն ԵՏԲ ՀԻՆԳԵՐՈՒՊ ԿՐՈԱԿԻ

27 ՅՈՒՆԻՍ 2008

Կիրակնօրեայ ընթերցումներ	Էջ 1
Կատարեալ ՆդէՔ (Գ)	Էջ 2
Ձկնորսներուն Կոչումը	Էջ 4
Ժամանակացոյց եւ Ծանուցում	Էջ 7

ԸՆԹԵՐՑՈՒՄ
ԵՍԱՅԻ ՄԱՐԳԱՐԷԻ ԳԻՐՔԷՆ
(58.13-59.7)

Այսպէս կ'ըսէ Տէրը.-
«Եթէ Շաբաթ օրը, իմ սուրբ օրս, հրաժարիս քու ցանկութիւններդ կատարելէ, եթէ Աստուծոյ նուիրուած Շաբաթ օրը ուրախարար ու նուիրական համարես, եթէ զայն պատուես՝ քու ընթացքդ փոխելով եւ թշնամական խօսքերէ հեռու մնալով, եւ յոյսդ Տիրոջ վրայ դնես, այն ատեն երկրի բարիքները պիտի պարգեւեմ քեզի եւ քեզի պիտի տամ այն ժառանգութիւնը որ քու հօրդ՝ Յակոբի խոստացայ: Ահա ես՝ Տէրս ըսի»:

ողորմութիւնս
անպակաս
պիտի ըլլայ
քու վրայէդ,
խաղաղութեան
ուխտս
անսասան
պիտի մնայ

Միթէ կը կարծէք թէ Տէրը ձեզ փրկելու կարողութիւնը չունի՞, կամ փակե՞ց իր ականջը, որպէսզի ձեզ չլսէ: Ո՛չ: Բայց ձեր մեղքերը պատճառ կ'ըլլան որ խրամատ բացուի ձեր եւ Աստուծոյ միջեւ, այնպէս՝ ինչպէս ձեր անօրէնութիւններուն պատճառով Աստուած երես դարձուց եւ չողորմեցաւ ձեզի: Որովհետեւ ձեր ձեռքերը արիւնով պղծուած են եւ ձեր մատները՝ մեղքով. ձեր շրթները սուտ խօսեցան, ձեր լեզուները անիրաւութեան գործիք եղան: Չկայ մէկը որ արդարութիւնը պաշտպանէ. չկայ մէկը որ իրաւունքով դատ տեսնէ. դուք ձեր շահերուն համար սուտերու կ'ապաւինիք եւ ուրիշները կը խաբէք. չարութիւն կը յղանաք եւ մեղք կը ծնանիք: Ձեր լարած դաւերը քարբերու հակիթներ են, որոնցմէ ուտել ուզողը մահ կը գտնէ, որովհետեւ ի՞ժ է անոնց մէջիներ: Ձեր հիւսած դաւերը սարդի ոտայն են, որոնցմէ հագուստ չ'ելլեր եւ բանի չեն ծառայեր: Դուք բնաւ չէք կրնար արդարանալ

ձեր գործերով, որովհետեւ ձեր գործերը անօրէն գործեր են եւ ձեր ձեռքէն միայն անիրաւութիւն կու գայ: Պատրաստ էք միշտ չարիք գործելու, անմեղ արիւն թափելու չէք վարանիր. միայն մեղաւոր խորհուրդներ կը սնուցանէք եւ ձեր այս ընթացքով կործանումի ու դժբախտութեան պատճառ կ'ըլլաք:

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ
ՏԻՄՈԹԷՈՍԻՆ ԳՐԱԾ ԱՌԱՋԻՆ ՆԱՄԱԿԷՆ
(4.12-5.10)

Հաւատացեալներուն օրինակ եղիր խօսքովդ, վարմունքովդ, սիրովդ, հաւատքովդ եւ մաքուր կենցաղովդ: Մինչեւ գալս հոգ տար իրենց՝ Աստուծոյ խօսքէն կարդալով, յորդորելով զիրենք եւ սորվեցնելով: Անփոյթ մի՛ գտնուիր այն շնորհքին նկատմամբ որ մարգարէական հոգիով քեզի տրուեցաւ, երբ երէցները ձեռք դրին քու վրայ: Այս ըսածներուս մասին խորհէ եւ զանոնք գործի վերածելու աշխատէ, որպէսզի ամէն մարդ յայտնապէս տեսնէ քու յառաջդիմութիւնդ: Ուշադիր եղիր թէ՛ դուն քեզի եւ թէ՛ սորվեցուցածիդ, եւ միշտ ալ այսպէս մնա՛, գիտնալով որ այդ ձեւով ո՛չ միայն ինքզինքդ կը փրկես, այլ նաեւ բոլոր քեզ լսողները:

Գերագոյն
պատուիրանը
սէրն է.
անարատ
սրտէ, մաքուր
խղճմտանքէ
եւ անկեղծ
հաւատքէն
բղխած սէրը:

Երբեք խստութեամբ մի՛ յանդիմաներ ձեր մէկը, այլ մեղմութեամբ յորդորէ զայն, ինչպէս հօրդ պիտի ընէիր: Երիտասարդները եղբօրդ տեղը սեպէ, պառաւները՝ մօրդ, իսկ երիտասարդուհիները քրոջդ տեղը դիր եւ ամենայն մաքրութեամբ մօտեցիր անոնց: Պատուէ եւ խնամէ ա՛յն այրիները որոնք իսկապէս որբեւայրի են: Իսկ երբ այրի մը գաւակներ ու թոռներ ունի, պէտք է անոնք նային իրեն, որպէսզի սորվին բարեպաշտութիւնը նախ տան մէջ կիրարկել՝ ծնողներէն իրենց տրուած խնամքին փոխարէն հոգ տանելով անոնց, որովհետեւ Աստուծոյ համար ա՛յդ է իրաւ եւ ընդունելի բարեպաշտութիւնը:

Իսկական այրին այն է՝ որ մէկը չունի, յոյսը միայն Աստուծոյ վրայ դրած է եւ գիշեր-ցերեկ աղօթքով ու խնդրանքով կ'անցընէ իր ժամանակը:

Օրէնքը լաւ է՝ երբ պէտք եղած ձեւով գործադրուի:

Իսկ հանգստութիւն ու վայելք փնտռող այրին կենդանի մեռած մըն է արդէն: Այնպիսիներուն այս պատուէրները տուր որպէսզի անարատ ըլլան: Իսկ մէկը որ իրեններուն եւ մանաւանդ իր ընտանիքի անդամներուն հոգ չի տանիր, այնպիսին իր հաւատքը ուրացած մըն է, շատ աւելի գէշ՝ քան անհաւատ մը:

Այրի սեպէ միայն ա՛յն կիները որոնք վախճուելու անց են, մէկ անգամ ամուսնացած, եւ բարի գործերով վկայուած են, այսինքն՝ գաւակներ մեծցուցած, հիւրասէր եղած, ճամբորդ հաւատացեալներուն խոնարհաբար ծառայած, նեղութեան մէջ եղողներուն օգնած, եւ իրենք գիրենք ամբողջութեամբ բարեգործութեան տուած են:

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆՆԷՆ ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆԷՍԻ (3.13-21)

Մեր Տէր Յիսուս Քրիստոս կ'ըսէ.- «Ոչ ոք երկինք ելաւ բացի մարդու Որդիէն, որ իջաւ երկինքէն, ուր կը գտնուէր: Եւ ինչպէս որ Մովսէս պղնձեայ օձը բարձրացուց անապատին մէջ, նոյնպէս ալ պէտք է մարդու Որդին բարձրանայ, որպէսզի անոր հաւատացողը յաւիտենական կեանք ունենայ: Որովհետեւ Աստուած ա՛յնքան սիրեց աշխարհը, որ մինչեւ իսկ իր միածին Որդին տուաւ, որպէսզի անոր հաւատացողը չմեռնի, այլ յաւիտենական կեանք ունենայ: Որովհետեւ Աստուած իր Որդին աշխարհ զրկեց, ո՛չ թէ որպէսզի Որդին աշխարհը դատապարտէ, այլ որպէսզի աշխարհը փրկէ: Ով որ կը հաւատայ անոր՝ չի դատապարտուիր. իսկ ով որ չի հաւատար անոր, արդէն իսկ դատապարտուած է, Աստուծոյ միածին Որդիին չհաւատալուն համար:

«Եւ դատապարտութիւնը այս է. հակառակ անոր որ լոյսը աշխարհ եկաւ, մարդիկ խաւարը լոյսէն աւելի սիրեցին, որովհետեւ չարութիւն կը գործէին: Ով որ չար գործ կը կատարէ, կ'ատէ լոյսը եւ լոյսին չի գար, որպէսզի իր գործերը չյայտնուին: Սակայն ով որ կը կատարէ ինչ որ ճշմարիտ է, լոյսին կու գայ, որպէսզի յայտնի ըլլայ թէ իր գործերը Աստուծոյ կամքին համաձայն գործուած են»:

ՎԱՐԴԱՎԱՌԷՆ ԵՏՔ Ե. ԿԻՐԱԿԻ (ԾԻԱԿԱՆ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆԵՐ - ԹԻ 27)

ԻԷ

«ԿԱՏԱՐԵԱԼ ԵՈՒԷ» (Դ)

Յիսուսի «Կատարեալ եղէք» խօսքի հասկացողութեան փորձիս մէջ, ահա հասայ Հին Կտակարանեան «կատարեալ» տիպարներէն եղիա մարգարէին:

Ինչպէս Մովսէս մարգարէի պարագային, եղիա մարգարէի մասին ալ «կատարեալ» մակդիրը չէ գործածուած: Բայց տիպարը այնքան սերտորէն եւ դրականորէն կապուած է Յիսուսի կեանքին, որ կարծէք թելադէր Աստուծոյ կողմէ անոր ընտրութիւնը՝ իբր իրեն կատարեալ սպասաւոր:

Մաղաքիայի մարգարէութեան մէջ, Տէրը հետեւեալ կանխատեսութիւնը ըրած է. «Ահա ես եղիա մարգարէն ձեզի պիտի զրկեմ՝ դեռ Տիրոջ մեծ ու հանգ օրը չեկած: Ան հայրերուն սիրտը՝ որդիներուն, եւ որդիներուն սիրտը՝ հայրերուն պիտի դարձնէ, որ չըլլայ թէ ես գամ ու երկիրը անէծքով զարնեմ» (Մղ 4.5-6): Եւ Յիսուսի ժամանակ եղիա մարգարէի վերադարձը կը սպասէին: Տիրոջ հրեշտակը Յովհաննէս Մկրտիչի հօր՝ Զաքարիա քահանային երեւնալով, կ'ըսէր. «Կինդ՝ եղիաբէթը մանչ գաւակ մը պիտի ծնի եւ զայն Յովհաննէս պիտի կոչես: ...Ան Տիրոջ առջեւէն պիտի քալէ՝ եղիայի հոգիով եւ զօրութեամբ լեցուած, որպէսզի հայրերը իրենց որդիներուն հետ հաշտեցնէ եւ անհնազանդները առաջնորդէ արդարներու իմաստութեան, եւ այսպիսով Տիրոջ գալուստին նախապատրաստուած ժողովուրդ մը պատրաստէ» (Ղկ 1.13, 17): Ասիկա կը թելադրէ, որ եղիայի տիպարը կամ անոր ոգին սահմանուած էր Քրիստոսի գալստեան, անոր գալուստը կը նախապատրաստէր: Յիսուս ալ Յովհաննէս Մկրտիչի համար ըսած է. «Յովհաննէսն է եղիան, որ պիտի գար» (Մտ 10.14):

Յովհաննէս Մկրտիչ ոչ թէ միայն նախապատրաստողը եղաւ Յիսուսի ճամբուն եւ զայն մկրտողը, այլեւ անոր մասին վկայեց, ըսելով. «Տեսա՛յ Հոգին, որ աղաւնիի պէս կ'իջնէր երկինքէն եւ կը հանգչէր անոր վրայ: Այո, ես չէի ճանչնար զինք, բայց ան՝ որ զիս զրկեց ջուրով մկրտելու, ըսաւ ինծի.- Որուն վրայ որ տեսնես թէ կ'իջնէ ու կը հանգչէ Հոգին, ան է որ Ս. Հոգիով պիտի մկրտէ» (ՅՅ 1.32-33): Յովհաննէս Մկրտիչի վերաբերող այս հատուածը՝ եղիա մարգարէին ալ

կարելի չէ կատարելութեան Հոգին տեսնել՝ առանց կատարելութեան ճամբուն մէջ ըլլալու կամ «կատարեալ» ըլլալու:

կը վերաբերի: Աստուծոյ Հոգին կը տեսնէ ան՝ որ կ'ընտրուի այդ տեսողութեան համար: Աստուծոյ Հոգին՝ կատարելութեան Հոգին է. եւ ինչպէս կարելի չէ բարդ միտք մը հասկնալ առանց անոր պատրաստ ըլլալու, նոյնպէս կարելի չէ կատարելութեան Հոգին տեսնել՝ առանց կատարելութեան ճամբուն մէջ ըլլալու կամ «կատարեալ» ըլլալու: Եղիա մարգարէն, ինչպէս բոլոր մարգարէները կատարելութեան ճամբուն մէջ էին, կամ Աստուծոյ նայուածքին մէջ «կատարեալ» էին: Պետրոս առաքեալ ըսած է, թէ մարգարէներուն մէջ Քրիստոսի Հոգին կը գործէր (Ա. Պտ 1.11): Քրիստոսի Հոգին Աստուծոյ Հոգին է կամ Ս. Հոգին է, այսինքն՝ կատարելութեան Հոգին: Եղիա մարգարէ ինքն ալ Քրիստոսի Հոգիով կը գործէր, այլ խօսքով կատարելութեան Հոգիով կը գործէր:

Եղիա մարգարէի Աստուծոյ «կատարեալ» համարուած ըլլալուն պատկեր մըն է նաեւ Յիսուսի Այլակերպութեան դէպքը: Լերան վրայ Յիսուսի կողքին երեւցած դէմքերէն մէկը Մովսէսն էր, միւսը՝ Եղիան: Ինչպէս Մովսէս մարգարէի առնչութեամբ ըսի, Եղիայի համար ալ կարելի է ըսել, որ անոնց խօսակցութիւնը Յիսուսի հետ՝ առաջնահերթաբար կը յայտնէ ներդաշնակութիւնը որ զիրենք իրարու կը կապէր: Այդ ներդաշնակութիւնը կը վկայէր Մովսէսի եւ Եղիայի կատարեալ հոգիներ ըլլալուն մասին: Նմանը կը գտնէ նմանը:

Եւ հիմա Եղիա մարգարէ «կատարեալ» մարդուն՝ Աստուծոյ հետ փոխյարաբերութեան գլխաւոր եզրերը.-

Առաջին. Եղիա մարգարէն յանկարծ կը յայտնուի: Ան իր կոչումը ստացած է եւ կանգնած Աքաբ թագաւորին դիմաց: Եւ ապրող, գրաբարը պիտի ըսէր՝ «կենդանի» Աստուծոյ անունով աղէտ մը կը մարգարէանայ (Գ. Թգ 17.1): Մարգարէութիւնը կը

Մարգարէն հաստատօրէն վստահ է, թէ Աստուծոյ խօսքը բնութեան վրայ ազդելու զօրութիւնը ունի:

յայտնէ Աստուծոյ խօսքին զօրութիւնը: Մարգարէն հաստատօրէն վստահ է, թէ Աստուծոյ խօսքը բնութեան վրայ ազդելու զօրութիւնը ունի:

Երկրորդ. Տէրը՝ իր ծառային խնամող Աստուած է (Գ. Թգ 17.2-4, 18.46, 19.5-8): Եւ զայն կամ իր ծառաները խնամելու համար կ'ընտրէ տարբեր ցեղի եւ տարբեր կրօնքի մարդիկ: Եղիայի պատմութեան մէջ կ'ընտրէ սիւրբաբար որբեւայրի մը (Գ. Թգ 17.8-9):

Երրորդ. Եղիա հնազանդ է Աստուծոյ խօսքին (Գ. Թգ. 17.5, 10, 18.2, 19.13, 19.19, Գ. Թգ 1.6, 15):

Չորրորդ. Աստուած իր ծառային աղօթքը կը լսէ եւ կը կենսագործէ (Եղիա Աստուծոյ կ'աղօթէ, եւ

Աստուած որբեւայրի մեռեալ զաւակին հոգին ետ կը վերադարձնէ - Գ. Թգ 17.21-22):

Հինգերորդ. Աստուած իր ծառային աղօթքը կը լսէ եւ Բահաղի քուրմերուն վրայ անոր յաղթանակ կը շնորհէ: Սակայն ծառային յաղթանակը Տիրոջ փառքին համար է, եւ ոչ թէ ծառային (Գ. Թգ 18.21-39):

ծառային յաղթանակը Տիրոջ փառքին համար է, եւ ոչ թէ ծառային

Վեցերորդ. Եղիա մարգարէ միայն իր Աստուծոյ կը հաւատայ. եւ զայն կ'ընդունի իբր միակ Աստուածը: (Մարգարէի պատմութեան մէջ այսօրուայ ընթերցողին համար անհանգստացնող տարբեր են քուրմերուն նկատմամբ անոր ծաղրական մօտեցումը (Գ. Թգ 18.27), եւ զանոնք կոտորելու անոր հրամանը (Գ. Թգ 18.40):

Այսօր որ այնքան ընդհանրանալ սկսած է միջկրօնական երկխօսութիւնը, մարգարէին կեցուածքը բացարձակօրէն այլամերժ կ'երեւայ, որ կը մերժէ քուրմերուն կրօնքին ճշմարտութեան նշոյլ մը իսկ ունենալը. իրեն համար անոնց աստուած Բահաղը ո՛չ ճայն ունէր, ոչ պատասխան կրնար տալ, եւ ոչ ալ մտիկ կրնար ընել. անիկա անգոյ աստուած մըն էր: Սակայն՝ զգոյշ: Կրօնական այլամերժութիւնը հին աշխարհին մէջ տարածուած ընդհանուր երեւոյթ էր, եւ մինչեւ այսօր՝ կը շարունակէ աշխարհի որոշ շրջաններուն մէջ տիրել: Նոյնիսկ հոն ուր միջկրօնական երկխօսութիւններ տեղի կ'ունենան:

Եղիա մարգարէի եւ այլոց արմատական կեցուածքին առնչութեամբ կրնայ հարց տրուիլ. Հապա ո՞ւր մնաց Քրիստոսի Հոգին, որ մարգարէներուն մէջ կը գործէր: Քրիստոսի Հոգիին գործելը պէտք չէ հասկնալ այնպէս՝ որպէս թէ մարգարէները մեքենաներ ըլլային կամ իրենց շարժումը ամբողջապէս ազատ ըլլար իրենց հոգեբանական եւ մշակութային շրջագիծէն: Քրիստոսի Հոգիին ճանաչումը կը զարգանայ եւ պիտի զարգանայ մինչեւ որ «ամէն բանի կատարումը գայ» - Պօղոս առաքեալ: Քրիստոսի Հոգին էապէս սէր է, այսինքն համայն մարդկութեան կրօնական փորձառութիւններուն խորքի սէրը կը տեսնէ, անոր վերջայտնութեան համար է):

Երկրորդը Եղիան է, որ «մրրիկով» կամ հրեղէն ձիեր ունեցող հրեղէն կառնով երկինգ պիտի ելլէր

Եօթներորդ. Եղիա մարգարէի պատմութեան մէջ ամենէն մեծ դէպքը իր երկինք «վերցուիլ»ն է: Հին Կտակարանեան էջերուն մէջ երկու դէմքեր կան, որ երկինք փոխադրուած են: Առաջինը Ենովքն էր, որուն համար Մնունդներու Գիրքը ըսած է. «Ենովք Աստուծոյ հետ քալեց եւ

չէր գտնուեր, քանզի Աստուած առաւ զանիկա» (Ծն 5.24): Եբրայեցիներուն Նամակին մէջ գրուած է. «Իր հաւատքին համար էր, որ ենովք երկինք փոխադրուեցաւ, առանց մահ տեսնելու. եւ իր մարմինը չգտնուեցաւ, քանի Աստուած զայն փոխադրած էր արգէն» (Եբր 11.5): Երկրորդը

Առ Աստուած իր խորագոյն վստահութիւնը՝ զինք արժանի ըրաւ մահուան մէջ չմնալու, եւ երկինք ելլելու...

Եղիան է, որ «մրրիկով» կամ հրեղէն ձիեր ունեցող հրեղէն կառքով երկինք պիտի ելլէր (Դ. Թգ 2.1, 11): Ան ալ, ուրեմն, մահ չտեսաւ:

Եղիա մարգարէն կրօնական նախանձախնդրութեան եւ զօրաւոր աղօթողի par excellence օրինակն է: Անոր կեանքին դրուագներէն յատկապէս սիրոնացի որբեւայրիի զաւակին վերակենդանացումը եւ իր երկինք փոխադրուելը՝ հաւատքի խորագոյն փորձառութիւն մը կը պատմեն: Փորձառութիւն մը՝ որ մահէն վեր կը դարձնէր զինք: Առ Աստուած իր խորագոյն վստահութիւնը՝ զինք արժանի ըրաւ մահուան մէջ չմնալու, եւ երկինք ելլելու, այսինքն՝ Աստուծոյ քով, այսինքն՝ Կատարելութեան:

ՀՈՒՐԻ ԳԶ

ՍԵՐՏՈՂՈՒԹԻՒՆ ՄԱՏԹԵՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԻՆ

Հեղինակ՝ ԶԱՐԵՀ ԱՐՔ. ԱԶՆԱԻՈՐԵԱՆ Խմբագիր՝ Գառնիկ Ք. Գ.

ՅԻՍՈՒ ՉՈՐԱ ՉԿԱՌՈՒՄԵՐ ԿՈ ԿԱՄՁԷ:

«Միջ Յիսուս Գալիլիայի լիճին եգեբքը կը շրջէր, տեսաւ երկու եղբայրներ, որոնք ձկնորս էին. Միմունը՝ որ Պետրոս կը կոչուէր, եւ անոր եղբայրը՝ Անդրէասը, որոնք ուռկանը շուրը կը նետէին ձուկ որսալու համար: Յիսուս ըսաւ անոնց.- Հետեւեցէ՛ք ինձի եւ ես ձեզ մարդու որսորդ պիտի ընեմ:

Անոնք անմիջապէս ձգեցին ուռկանները եւ հետեւեցան Յիսուսի:

Քիչ մը առաջ երթալով, Յիսուս ուրիշ երկու եղբայրներ ալ տեսաւ, Ջեբեդէոսի որդիները՝ Յակոբոսը եւ անոր եղբայրը Յովհաննէսը, որոնք իրենց հօր՝ Ջեբեդէոսի հետ նաւակին մէջ էին եւ իրենց ուռկանները կարգի կը դնէին: Զանոնք ալ կանչեց: Անոնք անմիջապէս ձգեցին նաւակն ու իրենց հայրը եւ հետեւեցան Յիսուսի» (4.18-22):

Այս գրուագով մեզի կը տրուի Յիսուսի առաջին աշակերտներուն ընտրութիւնը: Առաջին անձերն են Պետրոս եւ անոր եղբայրը՝ Անդրէաս: Յիսուս անոնց ընտրութիւնը կատարած է, երբ անոնք «ուռկանը ջուրը կը նետէին ձուկ որսալու համար»: Անոնք Յիսուսի կոչին անմիջապէս կը պատասխանեն ու ձգելով իրենց ուռկանները՝

կը հետեւին: Քիչ մը անդին երկու ուրիշ ձկնորս եղբայրներ՝ Յակոբոսը եւ Յովհաննէսը գտնելով իրենց հօր հետ՝ զանոնք ալ կը կանչէ, երբ անոնք զբաղած էին իրենց ուռկանները կարգի դնելով: Այս երկուքն ալ իրենց նաւակը եւ հայրը ձգելով՝ Յիսուսի կը հետեւին անմիջապէս:

Ինչո՞ւ համար Յիսուս ձկնորսներ կ'ընտրէ:

Շատ պարզ դրուագ մըն է, բայց մեզի մտածել կու տայ:

Առաջին հերթին, նորընտիր աշակերտներուն ասպարէզը ուշադրութիւն կը գրաւէ: Անոնք ձկնորսներ էին: Ինչո՞ւ համար Յիսուս ձկնորսներ կ'ընտրէ:

Հին Կտակարանին մէջ կը կարդանք. «Ինչպէս ձուկերը չար ուռկանով կը բռնուին եւ թռչունները ձուղակի մէջ կը բռնուին, նոյնպէս մարդոց որդիներն ալ որոգայթի մէջ կ'իյնան» (Ժղ 9.12): Եզեկիէլի մարգարէութեան մէջ «ձուկեր»ը խորհրդանիշ են մարդոց (տե՛ս Եզ 29.3-4): Նոյն մարգարէն ալ «ձուկեր»ը գործածած է իբր խորհրդանիշ մարդոց (Եզ 47.8-9): Ամովս մարգարէին բերնով Տէրը կ'ըսէ. «...ահա ձեր վրայ օրեր պիտի գան, երբ ձեզ կարթերով պիտի վերցնեն ու ձեր սերունդը՝ ձուկի կարթերով» (Ամ 4.2): Այս մէջբերումին մէջն ալ յատակ է, որ մարդիկ ձուկերու նմանցուած են: Իսկ «ձկնորս» բառին առնչաբար Երեմիայի մարգարէութիւնը հետեւեալ խօսքը ունի. «Ահա ես շատ ձկնորսներ բերել պիտի տամ (...), որ զանոնք որսան» («զանոնք» ըսելով՝ մարգարէութիւնը նկատի ունի Իսրայէլի որդիները):

միակ բանը որուց մարդ կրնայ վստահիլ ալեկոծ ջուրերուց մէջ՝ Աստուած է:

Ուրեմն, «ձկնորս»ները Աստուծոյ կամքը կատարելու համար են: Եզեկիէլի 47.10-ին «ձկնորս»ները Աստուծոյ փրկութեան ծրագրին սպասաւորներն են: Արդ, Յիսուսի կողմէ իր աշակերտներուն ընտրութիւնը ձկնորսներու շրջանակէն՝ պատահական չէր: Նաեւ ալ պատճառներ ալ կարելի է տեսնել ձկնորս-առաքեալներու ընտրութեան մէջ:

Ինչպէս կարգ մը մեկնիչներ դիտել տուած են, ձկնորսները բնութեան ոյժերուն դէմ պայքարի մէջ կ'ըլլան: Գիտենք, որ բնութեան ամենէն անկայուն բաներէն մէկը ջուրն է: Հովին ու փոթորիկին մէջ մանաւանդ, ջուրերուն դէմ պայքարը մարդս կը ձգէ վիճակի մը մէջ, ուր

անոր կեանքը կախում կ'ունենայ ո՛չ թէ իրմէ, այլ՝ Աստուծմէ. միակ բանը որուն մարդ կրնայ վստահիլ ալեկոծ ջուրերուն մէջ՝ Աստուծ է: Այս հասկացողութեամբ, ձկնորսները աւելի մօտիկ են Աստուծոյ:

Ձկնորսները ոչ թէ միայն կեանքի փորձով աստուածավախ կ'ըլլան, այլ նաեւ չարքաշ կ'ըլլան անոնք: Պայքարը որ անոնք կը մղեն բնութեան ոյժերուն դէմ, զիրենք կը մարզէ,

Պայքարը որ անոնք կը մղեն բնութեան ոյժերուն դէմ, զիրենք կը մարզէ, զիրենք կը դարձնէ: Աստուած ճիշդ այդպիսի մարդոց պէտք ունի: Պէտք ունի մարդոց, որոնք կատարելապէս եւ բացարձակ կերպով իրեն կը վստահին. եւ պէտք ունի մարդոց՝ որոնք պայքարէն եւ պայքարելէ չեն վախնար:

Պայքարը որ անոնք կը մղեն բնութեան ոյժերուն դէմ, զիրենք կը մարզէ, զիրենք կը դարձնէ: Աստուած ճիշդ այդպիսի մարդոց պէտք ունի: Պէտք ունի մարդոց, որոնք կատարելապէս եւ բացարձակ կերպով իրեն կը վստահին. եւ պէտք ունի մարդոց՝ որոնք պայքարէն եւ պայքարելէ չեն վախնար:

Դրուագիին մէջ ուշագրաւ այլ կէտ մըն է՝ աշակերտներուն գործի վրայ ըլլալը: Աստուած ծոյլեր չ'ընտրեր, այլ գործի, եւ գործի մէջ պայքարող

Աստուած ծոյլեր չ'ընտրեր, այլ գործի, եւ գործի մէջ պայքարող մարդիկ կ'ընտրէ:

Դրուագիին մէջ ուշագրաւ այլ կէտ մըն է՝ աշակերտներուն գործի վրայ ըլլալը: Աստուած ծոյլեր չ'ընտրեր, այլ գործի, եւ գործի մէջ պայքարող մարդիկ կ'ընտրէ: Աստուած չ'ընտրեր մարդիկ, որոնք կը սիրեն ծոյլ օրեր անցընել եւ աշխատասիրութեան ճառեր խօսիլ, այլ կ'ընտրէ մարդիկ՝ որոնք գործունեայ են եւ հարկ եղած ատեն՝ պայքարիլ գիտեն: Աստուած իրեն գործակիցներ կ'ըզէ եւ ոչ թէ խօսող-բերաններ:

Նախորդ հատուածով տեսանք, որ Քրիստոս հեթանոսներուն վրայ ծագող լոյսն է: Թէեւ ինք լոյսն է, բայց նաեւ իր լոյսը աշխարհին վրայ տարածող ջահակիր գործիչներու պէտք ունի ան:

«...ձեզ մարդու որսորդ պիտի ընեմ», կ'ըսէ Յիսուս: Ներկայ մեր լեզուին մէջ, «մարդորսութիւն» բառը ժխտական իմաստ ունի: Բայց Յիսուսի խօսքը կը վերաբերի լոյսին բերելու համար որսորդութեան: Յիսուս աշակերտներուն պաշտօն կու տար խաւարին, անգիտութեան եւ անօրէնութեան մէջ կորսուած մարդիկը՝ արդարութեան շաւիղ բերելու, Երկինքի արքայութեան ժառանգորդ դարձնելու զանոնք:

Առաջին երկու աշակերտները ուռկանը ջուրը նետելու վրայ էին, իսկ միւս երկուքը՝ գայն կարգի բերելու վրայ: Տարբերութիւնը բան մը կ'ըսէ՞ մեզի:

Աւետարանիչը, հաւանաբար, Եկեղեցոյ յետագայ գործունէութեան երկու գլխաւոր

երեսներ ուզած է ցոյց տալ: Առաջին պատկերը կը նախագծէ՝ Եկեղեցոյ քարոզութեան երեսը: Եկեղեցին իր քարոզութեան ուռկանը տեւաբար պէտք է աշխարհի ծովուն մէջ նետէ, որպէսզի անհաւատ մարդոցմէ որսալով՝ Երկինքի արքայութեան ժառանգորդներ հաւաքէ: Երկրորդ պատկերը՝ վերանորոգութիւնը: Որպէսզի Եկեղեցին իր քարոզութիւնը կարենայ ազդու պահել՝ անհրաժեշտ է, որ ինքզինք վերանորոգէ: Ինքզինք պէտք է վերանորոգէ առաջնահերթաբար իր մէջէն վերցնելով բաժանումները եւ պառակտումները: Եկեղեցոյ կեանքին մէջ բաժանումները եւ պառակտումները սկիզբէն եղած են: Նոյնիսկ Յիսուսի երկրաւոր առաքելութեան ժամանակ աշակերտներուն միջեւ վէճ մը կը ծագի, թէ Յիսուսի մահուան պարագային՝ իրենցմէ ո՞վ պիտի ըլլայ մեծը (Մտ 18.1-5, Մկ 9.33-37, Ղկ 9.46-48): Պօղոս առաքեալ ալ իր նամակներուն մէջ որքա՞ն կոչ կ'ըզէ, որ Եկեղեցիները յաղթահարեն իրենց բաժանումները եւ պառակտումները, եւ միաբանին: Եկեղեցին մինչեւ այսօր նոյն տագնապին մէջն է: Կը հաւատանք, որ բաժանումները եւ պառակտումները պիտի դարմանուին: Այս երկրի վրայ այդ դարմանումը որոշ չափով մը պիտի ըլլայ, սակայն ամբողջական դարմանումը դժուար թէ այս աշխարհին մէջ իրականանայ: Արդ, Եկեղեցոյ բոլոր վերանորոգութիւններուն հիմնականը՝ ներքին լարուածութիւններուն եւ հակառակութիւններուն վերացումն է: Ապա՝ անոնց կը հետեւին միւս վերանորոգութիւնները: Առանց ներքին բարոյական վերանորոգութեան՝ ամէն վերանորոգութիւն խաբկանք է: Հետեւաբար, Եկեղեցին որպէսզի Երկինքի արքայութեան իր քարոզութիւնը ազդու պահէ՝ նախ եւ առաջ ինքզինք պէտք է վերանորոգէ բարոյապէս կամ իր ներքին փոխարարներութեանց մէջ սիրոյ տեղ տայ:

Եկեղեցոյ բոլոր վերանորոգութիւններուն հիմնականը՝ ներքին լարուածութիւն եւ հակառակութիւններուն վերացումն է:

Կը տեսնենք, որ Յիսուսի կոչին վրայ աշակերտները ամբողջական պատրաստակամութեամբ իրեն կը հետեւին:

Գիտենք, որ Յիսուսի «Հետեւեցէ՛ք ինծի» պարզ հետեւորդութեան մը մասին չէ: Անիկա յատուկ նշանակութիւն մը ունի: Յանձնառութիւն մը կ'ենթադրէ անիկա: Կրնա՞յ ըլլալ որ առանց գաղափար ունենալու մէկը հետեւի գինք կանչողի մը: Յիսուս նախապէս ծանօթ էր իր

կանչած աշակերտներուն: Յովհաննէսի աւետարանին համաձայն՝ աշակերտներէն ոմանք կը ճանչնային զինք (ՅՃ 1.35-50): Անկասկած,

Եթէ մէկը ուզէ ինձի հետեւիլ՝ թող ուրախայ իր անձը, առնէ իր խաչը եւ ետեւէս գայ:

Յիսուս իր աշակերտները ընտրելէ ետք՝ զանոնք պատրաստեց. ոմանց պարագային նախկին ծանօթութիւնը եւ հոգեւոր փորձառութիւնը խորացուց, իսկ ոմանց ալ հոգիի աչքերը բանալով՝ զանոնք առաքելութեան ճամբուն վրայ դրաւ: Աւետարանները այս մասին չեն գրած:

Յիսուսի հետեւիլը դիւրին չէ: Մատթէոսի 10-րդ գլխուն 37-39

համարները մեզի կու տան անոր պայմանները: Յիսուս ըսած է. «Ով որ իր հայրն ու մայրը աւելի կը սիրէ քան զիս՝ արժանի չէ ինձի: Եւ ով որ իր տղան կամ աղջիկը աւելի կը սիրէ քան զիս՝ արժանի չէ ինձի: Ով որ իր կեանքը իրեն կը պահէ՝ պիտի կորսնցնէ զայն, եւ ով որ իր կեանքը կը կորսնցնէ ինձի համար, պիտի գտնէ զայն»: 16.24-25-ին մէջ կը կարդանք. «Ապա Յիսուս իր աշակերտներուն ըսաւ.- Եթէ մէկը ուզէ ինձի հետեւիլ՝ թող ուրանայ իր անձը, առնէ իր խաչը եւ ետեւէս գայ: Որովհետեւ ո՛վ որ ուզէ իր կեանքը փրկել՝ պիտի կորսնցնէ զայն, եւ ո՛վ որ ուզէ ինձի համար կորսնցնել իր կեանքը՝ պիտի գտնէ զայն»: Ղուկասի մօտ կը կարդանք. «Յիսուս անոնց դառնայով ըսաւ.- Ով որ ինձի կու գայ եւ զիս աւելի չի սիրեր քան իր հայրն ու մայրը, կիներն ու զաւակները, եղբայրներն ու քոյրերը, ինչպէս նաեւ իր իսկ անձը, չի կրնար ինձի աշակերտ ըլլալ: Որովհետեւ ով որ իր խաչը չ'առնէր եւ ինձի չի հետեւիր, ինձի աշակերտ չի կրնար ըլլալ». նաեւ՝ «...ձեր մէջէն անոնք որ չեն կրնար հրաժարիլ իրենց ամբողջ ունեցածէն, չեն կրնար ինձի աշակերտ ըլլալ» (Ղկ 14.26-27, 33): Պայմաններու այս պարզումէն ետք՝ մեզի կը մնայ մէկ բան՝ ամբողջացնելու համար Յիսուսի հետեւորդութեան բարոյականը: Մատթէոսի 19.27-29-ին մէջ է անիկա: Ահա հատուածը. «Պետրոս ըսաւ.- Ահա մեր ամբողջ ունեցածը ձեզիցինք եւ հետեւեցանք քեզի. մե՞նք ինչ պիտի ըլլանք:

Յիսուս պատասխանեց.- Երկրորդ գալուստին, երբ Մարդու Որդին իր փառքի աթոռին բազմի, դուք որ ինձի հետեւեցաք՝ պիտի բազմիք տասներկու գահերու վրայ, դատելու համար Իսրայէլի տասներկու ցեղերը: Եւ ով որ ձեզեց տուն, եղբայրներ, քոյրեր, հայր ու մայր, կին ու զաւակներ եւ ազարակներ՝ ինձի համար, հարիւրապատիկը պիտի ստանայ եւ յաւիտենական կեանքը ժառանգէ»: Այս

հատուածը Յիսուսի հետեւորդութեան վարձատրութիւն կը խոստանայ:

Ուրեմն, Յիսուսի հետեւելու պայմաններն են.
- Անձը ուրանալը,
- Տուն ձգելը,
- Ընտանիքէն հրաժարիլը,
- Խաչը առնելը եւ մնայուն կերպով հետեւիլը: Այս պայմաններուն գործադրութիւնը պիտի վարձատրուի, կ'ըսէ Յիսուս:

Միայն նշեմ այստեղ, որ տուն եւ ընտանիք ձգելու Յիսուսի խօսքը պէտք չէ հասկնալ իբր զանոնք ուրանալու հրաւէր: Յիսուս ուրանալ չի քարոզեր: Իր հարցն է, թէ երբ պէտք է ընտրութիւն ըլլայ, ո՞վ կամ որո՞նք պիտի գրաւեն առաջին տեղը: Անկարելի է ամբողջապէս Յիսուսի հետեւիլ եւ կեանքին մէջ առաջին տեղը ուրիշի կամ ուրիշներու տալ:

Յիսուսի հրաժարման կոչին մէջ ամենէն դժուար թուացողը՝ երկրաւոր ինչքերուն, ստացուածքներուն վերաբերողն է: Յաճախ կը տեսնենք, որ մարդոց համար իրենց ընտանեկան պարագաներէն հրաժարիլը շատ ծանր չէ կամ ոչինչ է. շատեր կան՝ որոնք կրնան իրենց հօրմէն, մօրմէն հրաժարիլ, քոյր, եղբայր ուրանալ, բայց հարստութենէ չեն ուզեր հրաժարիլ: Ընդհակառակը՝ վէճեր կը ծագին ինչքի կամ ստացուածքի համար: Երկրաւոր ինչքը կամ ստացուածքը ոսկի շղթաներ են, որ մարդը կը կաշկանդեն եւ զայն կը պահեն աշխարհի մտածողութեան եւ մտահոգութեան մէջ: Ով որ աշխարհի մտածողութեան եւ մտահոգութեան մէջ կը մնայ, չի կրնար Աստուծոյ մտածողութիւնը եւ կամքը ճանչնալ, ու Անոր ծառայել: Յիսուսի հետեւիլը՝ Աստուծոյ մտածողութեան եւ կամքին գործադրութեան մէջ ըլլալ է, եւ այդ ճանապարհը շատ դժուար է, որովհետեւ խաչի ճանապարհ է: Սեփական խաչը առնելը եւ քայիլը չի նշանակեր նեղութիւններ յանձն առնել: Յիսուսի ակնարկած խաչը գոհողութեան խորհրդանշան է, մինչեւ մահ կամ նահատակութիւն գացող գոհողութեան մը:

Մնայուն եւ ամբողջական կերպով Յիսուսի հետեւորդ ըլլալը պարզապէս անկարելի է՝ առանց աշխարհէն հրաժարելու:

Ով որ աշխարհի մտածողութեան եւ մտահոգութեան մէջ կը մնայ, չի կրնար Աստուծոյ մտածողութիւնը եւ կամքը գանչնալ, ու Անոր ծառայել:

(Շարունակելի 11)

**ՅԱՋՈՐԴ ՇԱՐԹՈՒՂ
ԺԱՄԱՆԱԿԱՅՈՅ**

Յիսգշարթի. 31 Յուլիս 2008

11.00 > Աղօթաժողով՝

Ս. ՅԱԿՈԲ քոյրերու ժողով

Կիրակի. 03 Օգոստոս 2008

09.30 > Առաւօտեան ժամերգութիւն

11.00 > Ս. Եւ անմահ Պատարագ

ՅԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԵԱՆ ՅԱՏՈՒԿ

**ՍՈՒՐԲ ԳՐԱՅԻՆ
ՍԵՐՏՈՂՈՒԹԻՒՆՆԸ
Կը վերսկսի**

ՍԵՊՏԵՄԲԵՐ 2008-Ի ԱՌԱՋԻՆ ՇԱՐԱԹԸ

ՀԻՒԱՆՈՒՆԵՐՈՒ ԱՅԵԼՈՒԹԻՒՆ

Բարեհաճեցէք հեռաձայնել Արժ.

Տ. Գառնիկ Քինյ. Գոյունեանին.

514 331 5445 x203 կամ 514 909 5203 թիփն:

**ԱրՏԱՂՅՏՈՒԵՅԷ
eglise58@sourphagop.com**

**ԵԿԵՂԵՅՈՅԱ ԹԵՐԹԻԿԻ
ԱՇԽԱՏԱՆԸ ՊԻՏԻ ԸՆԴՀԱՏՈՒ
Օգոստոս 2008 ԱՍՈՒՂ
ԸՆԹԱՅԵՐՆ ԵՒ ՎԵՐՍԿՍԻ
ՍԵՊՏԵՄԲԵՐ 2008-Ի սԿԻՉԸ:**

**ՆԱԽՈՐԴ ԹԻԲԵՐՈՒ ԿՐԱՔ ԳՏՆԵԼ
www.sourphagop.org/lradou
ԿԱՅԷՉԻՆ ԿՐԱՂ**

**Ս. ՅԱԿՈԲ ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԴՊՐՈՑԻ
29ՐԴ ՏԱՐԵՇՐՁԱՆ**

**վերամուտ՝
ԿԻՐԱԿԻ
14 ՍԵՊՏԵՄԲԵՐ 2008**

Մանրամասնութեանց համար դիմել
Տնօրէնին՝ Պրն Թորոս Պապիկեանին
514 956 1277 կամ
director@sourphagop.org

կայքէջ՝
www.sourphagop.org

«Մաշտոցի Արձագանգ»
www.sourphagop.org/mashdots

ՍՈՅՆ ԹԵՐԹԻԿԸ Ե-ԱՄԱՅԿՈՎ ԱՏԱՆԱՂԻ
ՀԱՄԱՐ ՁԵՐ Ե-ՀԱՍՅԷՆ ՈՒՊՈՒՐԿԵՅԷՔ
eglise58@sourphagop.com-ԻՆ

**ՀՈԳԵՀԱՆԳԱՏԵԱՆ ՁԵՐ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՆԱԽՕՐՔ
ԿԱՏԱՐԵՅԷՔ ԿԱՊՈՒԵԼՈՎ
ԵԿԵՂԵՅՈՅԱ ԳՐԱՍԵՆԵԱԿ**

**ՀԱՄԱՂԵՐԻ ՃԱՂՂՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ
ԵԿԵՂԵՅԻՈՅ ԳՐԱՍԵՆԵԱԿԸ**

ԲԱՅ Է

ԵՐԿՈՒԵԱՐԹԻՆ ՈՒՐԲԱԹ
ժԱՄԸ 8.30-ԵՆ 16.00

ՀԱՃԵՅԷՔ ԿԱՊՈՒԻԼ ԶԱՐՏՈՒԱՐԻՆ՝
514 331 5445 x202
ԿԱՄ ՀՆՈՎԻՆ՝
514 331 5445 x203
ԿԱՄ ԳՐԵԼ ՀԵՏԵԻԵՂ Ե-ՀԱՍՅԷՐՆ՝
eglise58@sourphagop.com



ՀՈԳԵԻՈՐ ՀԱՄԵՐԳ

2008-ի ԴԵԿՏԵՄԲԵՐԻՆ

ՓՈՐՁԵՐԸ ՍԿՍԱՆ ՅՈՒԼԻՍ 21-ԻՆ

ԵՐԿՈՒՇԱՔԹԻ. ՍՈՓՐԱՆՕ ԵՒ ԱԼԹՕ

ԵՐԵՔՇԱՔԹԻ. ԹԵՆՈՐ ԵՒ ՊԱՍ

ՓՈՐՁԵՐԸ ԿԸ ԿԱՏԱՐՈՒԻՆ

ԵՐԿՈՒՇԱՔԹԻ ԵՒ ԵՐԵՔՇԱՔԹԻ ԵՐԵԿՈՆԵՐԸ ԺԱՄ 8.00-9.30

ԱՐԺ. Տ. ՀՐԱՅՐ Ա. ՔՀԱ. ՆԻԿՈՒԵԱՆԻ

ԵՒ

ՏԻԿ. ՅԱՍԻԿ ԻՆՃԵՃԻԿԵԱՆԻ

ԿՈՂՄԷ